ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԾՆՆԴԻ ՓԱՌԱՎՈՐ ՈՒՂԻ

Պրոֆ. Ա. Մ. ՀԱԿՈԲՅԱՆ

Սովետական Հայաստանը Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության անմիջական ծնունդն է, հեղափոխություն, որը «փշրեց ազգային ճնշման շղթաները, հռչակեց և ապահովեց ազգերի ինքնորոշման իրավունքը, ընդհուպ մինչև անջատումը։ Հեղափոխությունը քարը-քարի վրա չթողեց շահագործողների դասային և դասակարգային արտոնություններից»[1]։

Աշխարհի խոշորագույն երկրներից մեկում՝ Ռուսաստանում ճեղքելով իմպերիալիզմի ճակատը, Հոկտեմբերյան հեղափոխությունը մարդկային պատմության նոր դարագլխի սկիզբը հանդիսացավ։

Ընդգծելով Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության միջազգային նշանակությունը, Վ. Ի. Լենինը գրել է.

«Մենք իրավունք ունենք հպարտանալու և հպարտանում ենք նրանով, որ մեզ երջանկության բաժին ընկավ սկսելու սովետական պետության կառուցումը, սկսելու դրանով համաշխարհային պատմության նոր դարաշրջան, այն նոր դասակարգի տիրապետության դարաշրջանը, որը ճնշված է բոլոր կապիտալիստական երկրներում և ամենուրեք գնում է դեպի նոր կյանք, դեպի հաղթանակ բուրժուազիայի դեմ, դեպի պրոլետարիատի դիկտատուրան, դեպի մարդկության ազատագրումը կապիտալի լծից, իմպերիալիստական պատերազմներից»[2]։

Հեղափոխության հաղթանակի առաջին օրերին, 1917 թ. նոյեմբերի 2 (15)-ին Վ. Ի. Լենինի ստորագրությամբ հրապարակվեց հեղափոխության կարևորագույն փաստաթղթերից մեկը՝ «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիան»։

Այդ պատմական փաստաթղթում ասված է, որ ժողովրդական կոմիսարների սովետը ազգային հարցում իր գործունեության հիմքում դնում է հետևյալ սկզբունքները.

«1. Ռուսաստանի ժողովուրդների հավասարությունն ու սուվերենությունը։

2. Ռուսաստանի ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքը ընդհուպ մինչև անջատումն ու ինքնուրույն պետություն կազմելը։

3. Բոլոր և ամեն տեսակի ազգային ու ազգային-կրոնական արտոնությունների ու սահմանափակումների վերացումը։

4. Ռուսաստանի տերիտորիայում բնակվող ազգային փոքրամասնությունների և ազգային խմբերի ազատ զարգացումը»[3]։

---

[1] *Սովետական Միության կոմունիստական կուսակցության ծրագիրը, Երևան, 1961, էջ 13։*

[2] *Վ. Ի. Լենին, Երկեր, 4-րդ հրատ., հատ. 33, էջ 42։*

[3] Образование СССР, Сборник документов 1917—1924, М.—Л., 1949, *էջ 20։*

Այդ դեկրետից մեկ ամիս հետո, նոյեմբերի 20-ին (դեկտեմբերի 3-ին) հրատարակվում է Ժողովրդական կոմիսարների սովետի դիմումը «Ռուսաստանի և արևելքի աշխատավոր բոլոր մուսուլմաններին», իսկ դեկտեմբերի 31-ին՝ «Թուրքահայաստանի մասին» դեկրետը, ինչպես նաև մի շարք այլ կարևոր փաստաթղթեր, որոնք խոշոր նշանակություն ունեցան մեր երկրում ազգային հարցի լուծման և ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում։

Սկսելով սոցիալիստական հասարակարգի կառուցումը, սովետական հանրապետությունները կանգնեցին նոր դժվարությունների առջև։ Երկարատև պատերազմները ծայրահեղ քայքայել էին ամբողջ երկրի տնտեսությունը։ Անջատանջատ սովետական հանրապետությունները անկարող էին սեփական ուժերով հաղթահարել տնտեսական, քաղաքական, ռազմական և դիվանագիտական դժվարությունները։ Ըգտագործելով այդ դժվարությունները, սովետական երկրի ներքին և արտաքին թշնամիները ակտիվ պայքար ծավալեցին նրա դեմ։ Ուստի, կոմունիստական կուսակցությունը, առաջնորդվելով Վ. Ի. Լենինի ցուցումներով, անհրաժեշտ համարեց ամուր պետական դաշինք հաստատել սովետական հանրապետությունների միջև։ Դրա արդյունքն այն եղավ, որ 1918 թ. հունվարին կազմակերպվեց Ռուսաստանյան ֆեդերացիան, 1922 թ. մարտին՝ Անդրկովկասյան ֆեդերացիան, իսկ նույն թվականի դեկտեմբերին՝ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը։

ՍՍՀՄ-ի ստեղծումը, որի ոգեշնչողը և կազմակերպիչը հանդիսացավ Վ. Ի. Լենինը, խոշորագույն պատմական իրադարձություն էր սովետական բոլոր ժողովուրդների, այդ թվում հայ ժողովրդի կյանքում։ Դրանով իրագործվեց նրանց պետական դաշինքը, անխախտ համագործակցությունը։

Հանդիսանալով մեր բազմազգ պետության՝ ՍՍՀՄ-ի իրավահավասար անդամներից մեկը, Սովետական Հայաստանը անցել է տնտեսական, քաղաքական ու կուլտուրական զարգացման փառավոր ուղի։ Նա Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50-ամյակը դիմավորում է նշանակալից հաջողություններով։

Սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում Հայաստանի բանվորներն ու գյուղացիները, հերոսական ստեղծագործական աշխատանք ծավալելով, 1925 թվականին հիմնականում ավարտեցին հնից ժառանգված քայքայված ժողովրդական տնտեսության վերականգնումը։ Դրան հաջորդեցին երկրում ծավալուն ինդուստրիալ շինարարությունը և ամբողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցումը։

Սովետական Հայաստանում նոր ծավալվող սոցիալիստական շինարարությունը իր մարմնացումը ստացավ նախապատերազմյան հնգամյա պլաններում, որոնք հաջողությամբ իրագործվեցին։ 1928—40 թվականներին հանրապետությունում արդյունաբերության ընդհանուր արտադրանքը ավելացել էր 15 անգամ, իսկ 1913 թվականի համեմատությամբ՝ 21,5 անգամ։ Արդյունաբերության այդպիսի արագ զարգացումն ապահովեց նրա տեսակարար կշռի բարձրացումը ժողովրդական տնտեսության մեջ, 1928 թվականի 28,1 տոկոսից 1940 թվականին հասնելով 80,7 տոկոսի։ Այդ ժամանակամիջոցում արդյունաբերության մեջ 800 միլիոն ռուբլու ներդրում կատարվեց։ Բնորոշ է, որ այդ տարիներին (ինչպես և հետագայում) Հայաստանի արդյունաբերության զարգացման միջին տեմպը ավելի բարձր էր, քան ՍՍՀՄ-ի արդյունաբերության։

զարգացման միջին տեմպը։ Այսպես, եթե առաջին հնգամյակում ՍՍՀՄ-ի արդյունաբերության զարգացման միջին տեմպը կազմում էր 22 տոկոս, ապա Հայաստանում այն հասել էր 58 տոկոսի, երկրորդ հնգամյակում՝ ՍՍՀՄ-ում՝ 17, Հայաստանում՝ 26 տոկոս, երրորդ հնգամյակի առաջին 3 տարիներին՝ ՍՍՀՄ-ում՝ 13, Հայաստանում՝ 23 տոկոս։ Այդ կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության հետևողական կենսագործման անմիջական արդյունքներից մեկն էր։

Երկրի ինդուստրացման հիման վրա սկսվեց ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի տեխնիկական վերակառուցումը և ստեղծվեցին անհրաժեշտ նախադրյալներ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման համար։

Հայաստանի աշխատավոր գյուղացիությունը հաջողությամբ իրականացրեց գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը։ Գյուղը կանգնեց զարգացման նոր, սոցիալիստական ուղու վրա։ Նրան սպասարկելու նպատակով 1935 թ. Հայաստանում կար 32 մեքենատրակտորային կայան, որոնք ունեին 1.402 տրակտոր, 185 կոմբայն, 242 ապրանքատար ավտոմեքենա և գյուղատնտեսական բազմաթիվ այլ մեքենաներ։

Նախապատերազմյան տարիներին Սովետական Միությունում, այդ թվում և Հայաստանում, հիմնականում իրականացվեց սոցիալիզմի հաղթանակը։ Լիկվիդացվեցին շահագործող դասակարգերը։ Ծաղեցին ու ձևավորվեցին բոլորովին նոր դասակարգեր՝ սովետական բանվոր դասակարգը և կոլտնտեսային գյուղացիությունը։ Ձևավորվեց սոցիալիստական հայ ազգը։ Սովետական Հայաստանում մեծ չափով աճեց ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերում աշխատող բանվոր-ծառայողների թիվը։

Նախապատերազմյան հնգամյակների տարիներին Հայաստանում նշանակալից հաջողություններ էին ձեռք բերվել կուլտուրական շինարարության, արվեստի և գիտության բնագավառներում։ 1914—1915 ուսումնական տարվա համեմատությամբ մասսայական դպրոցներում սովորողների թիվը 1940 թվականին ավելացել էր 9,4 անգամ, ուսուցիչների թիվը 1.164-ից հասել էր 10.822-ի։ Եթե մինչև սովետական կարգերի հաստատումը Հայաստանում չկար ոչ մի բարձրագույն դպրոց, ապա 1939—40 ուսումնական տարում Հանրապետությունում գործում էին 9 բարձրագույն ուսումնական հաստատություն 7.426 ուսանողներով, իսկ տեխնիկումներում կար 11.008 սովորող։ Սովետական իշխանության գոյության առաջին 20 տարվա ընթացքում Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունները երկրին տվեցին 7.268 մասնագետներ՝ ինժեներներ, գյուղատնտեսներ, բժիշկներ, մանկավարժներ, անասնաբույժներ և այլն, իսկ տեխնիկումները՝ 13.300 մասնագետներ, որոնց մի զգալի մասը աշխատանքի էր մեկնել եղբայրական սովետական հանրապետությունները։

1935 թվականին Հայաստանում ստեղծվեց ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալ։ Երևանի պետական համալսարանի հետ միասին, որն սկսած 1921 թվականից մեծ աշխատանք էր կատարել ոչ միայն մանկավարժական, այլև գիտական կադրերի պատրաստման և գիտության զարգացման համար, ՍՍՀՄ ԳԱ Հայկական ֆիլիալը ծավալուն աշխատանքներ սկսեց Հանրապետությունում գիտության տարբեր բնագավառների հետագա զարգացման համար։ Աճելով և ամրապնդվելով, Հայրենական մեծ պատերազմի

ժամանակ՝ 1943 թվականին սովետական կառավարության որոշմամբ այն վերածվեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի, որի իսկական անդամներ ընտրվեցին նշանավոր գիտնականներն Հ. Օրբելին, Հ. Աճառյանը, Մ. Աբեղյանը, Ս. Մալխասյանցը, Վ. Համբարձումյանը և ուրիշներ։

Գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրերից հայ ժողովուրդը, Սովետական Միության մյուս ժողովուրդների հետ միասին, հերոսական պայքարի դուրս եկավ նենգ ու վտանգավոր թշնամու դեմ, որը նպատակ ուներ զավթել մեր սովետական հայրենիքը, ստրկացնել նրա ժողովուրդներին։ Սերտորեն համախմբվելով կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության շուրջը, հայ ժողովուրդը մոբիլիզացրեց իր բոլոր ուժերը թշնամուն ջախջախելու հնարավորությունը։ Իր զավակներից հարյուր հազարավոր մարտիկների նա ուղարկեց ռազմաճակատ և պատվիրան տվեց առանց հաղթանակի ետ չվերադառնալ։

Ամբողջ ժողովրդական տնտեսությունը կարճ ժամանակամիջոցում վերակառուցելով պատերազմական պահանջներին հարմարեցնելով, Սովետական Հայաստանի աշխատավորները վիթխարի աշխատանք կատարեցին ռազմաճակատին օգնելու համար։

Մարդկային հասարակության պատմության մեջ իր մասշտաբներով ամենամեծ և իր տեխնիկայով ամենազորեղ այդ ահռելի պատերազմի տարբեր ռազմաճակատներում, սովետական հզոր բանակի մարտակարգերում ֆաշիստական հորդաների դեմ ծանր ու հերոսական պայքար էին տանում հայկական 390-րդ, 89-րդ, 408-րդ, 409-րդ և 76-րդ դիվիզիաները, որոնք փառքով պսակեցին իրենց մարտական դրոշները։ Նրանցից մեկը՝ եռակի շքանշանակիր 89-րդ Թամանյան դիվիզիան գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանի հրամանատարությամբ մասնակցեց ֆաշիստական Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինի գրավմանը և այնուհետև հասավ մինչև Էլբա։ Բացի ազգային դիվիզիաներից, տասնյակ հազարավոր հայ մարտիկներ թշնամու դեմ մարտնչում էին սովետական մյուս զորամասերի շարքերում։

Հայրենական պատերազմի ռազմաճակատներում ցուցաբերած սխրագործությունների համար հայ ժողովրդի և Հայաստանում ապրող մյուս ազգերի զավակներից 106 հոգի արժանացան Սովետական Միության հերոսի բարձր կոչման։ Իրենց մարտական փառավոր գործերով ամբողջ Սովետական Միությունում և նրանից դուրս հայտնի դարձան Սովետական Միության կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանը, Սովետական Միության հերոսներ Հունան Ավետիսյանը, Սուրեն Առաքելյանը և շատ ուրիշներ։

Սովետական բանակի բարձր հրամանատարության կազմում իրենց արժանավոր տեղը գրավեցին առաջին Մերձբալթյան ռազմաճակատի զորքերի հրամանատար, բանակի գեներալ, այժմ Սովետական Միության մարշալ Ի. Ք. Բաղրամյանը, ՍՍՀՄ ռազմա-ծովային ուժերի ժողկոմի տեղակալ, նավատորմի ադմիրալ Ի. Ս. Իսակովը, ռազմա-օդային ուժերի շտաբի պետ, ավիացիայի մարշալ Ս. Ա. Խուդյակովը (Ա. Ա. Խանֆերյան)։ Խոշոր միավորումների հրամանատարներ կամ քաղաքական աշխատողներ էին գեներալ Հ. Խ. Բաբաջանյանը, Մ. Ա. Պարսեղովը, Վ. Ս. Տամրուչին, Ս. Թ. Գալաջևը, Ս. Ս. Մարտիրոսյանը, Ն. Գ. Սաֆարյանը, Բ. Ի. Առուշանյանը, Հ. Հ. Մարտիրոսյանը, Ա. Գ. Կարապետյանը և շատ ուրիշներ, որոնց թիվը 60-ից ավելի էր։

Մարտերում ցուցաբերած քաջագործությունների համար մոտ 70 հազար հայ ռազմիկներ պարգևատրվեցին ՍՍՀՄ շքանշաններով և մեդալներով։ Թիկունքում կատարած լավագույն աշխատանքի համար արտադրության հազարավոր առաջավորներ արժանացան կառավարական շքանշանների։ «Կովկասի պաշտպանության համար» և «1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում աշխատանքային արիության համար» մեդալներով պարգևատրվեցին 376.038 աշխատավորներ։ Սենգ թշնամու ջախջախման գործում իր արժանավոր ավանդը մտցրեց սիբիրաբնակությունը։

Բարձր գնահատելով հայ ժողովրդի ակտիվ մասնակցությունը Հայրենական պատերազմում, ՍՄԿԿ Կենտրոնական Կոմիտեն և ՍՍՀՄ Ժողկոմսովետը Հայաստանում սովետական կարգերի հաստատման 25-ամյակի առթիվ ուղարկած ողջույնի հեռագրում նշել են. «...Հայրենական պատերազմի տարիներին հայ ժողովուրդը պատվով կատարեց իր պարտքը Հայրենիքի հանդեպ։ Հայ ռազմիկները, Սովետական Միության մյուս ժողովուրդների զավակների հետ միասին, անձնվիրաբար պաշտպանում էին մեր Հայրենիքի ազատությունը և անկախությունը։ Հայաստանի բանվորները, կոլտնտեսականները և ինտելիգենցիան անդուլ կերպով աշխատում էին թշնամու դեմ հաղթանակ նվաճելու համար»[4]։

Հաղթանակով ավարտելով պատերազմը, սովետական ժողովուրդը ձեռնամուխ եղավ խաղաղ տնտեսական շինարարության։ ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության վերականգնման և զարգացման կարևորագույն խնդիրներ էին նախատեսված չորրորդ հնգամյա պլանում (1946—1950 թթ.)։ Այդ պլանը հետպատերազմյան խաղաղ շինարարության առաջին պլանն էր, որով նախատեսված էր ոչ միայն վերականգնել 1941—1945 թթ. Հայրենական պատերազմի ժամանակ ֆաշիստական հորդաների կողմից մեծ վնաս ստացած Սովետական Միության սոցիալիստական արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը և ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերը, հասնել նախապատերազմյան 1940 թվականի մակարդակին, այլև զգալիորեն գերազանցել այդ մակարդակը։

Մոբիլիզացնելով իրենց բոլոր ուժերը, մեր սովետական մեծ Հայրենիքի աշխատավորները ձեռնամուխ եղան այդ հնգամյա պլանի կատարմանը և մեծ հաջողությամբ ավարտեցին այն։

Չորրորդ հնգամյակի տարիներին խոշոր հաջողություններ ձեռք բերվեցին նաև Սովետական Հայաստանում։ 1950 թվականին Հանրապետության աշխատավորները հաջողությամբ ավարտեցին չորրորդ հնգամյա պլանը։

Այդ հնգամյակի տարիներին Սովետական Հայաստանում առանձնապես արագ զարգացում ապրեցին մեքենաշինությունը, գունավոր մետաղների, քիմիական և շինանյութերի արդյունաբերությունը։ Արագընթաց զարգացում տեղի ունեցավ նաև էներգետիկայի, սննդի, թեթև արդյունաբերության և մի շարք այլ ճյուղերի գծով։ Կառուցվեցին և գործարկվեցին արդյունաբերական տասնյակ նոր ձեռնարկություններ։ Այդ բոլորի շնորհիվ Հայաստանի ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքը, 1940 թվականի համեմատությամբ, 1950 թվականին ավելացել էր 2,4 անգամ, պլանով նախատեսված 2.1 անգամի փոխարեն։ 1945 թվականի համեմատությամբ 1950 թվականին աշխատանքի արտադրողականությունն աճել էր 54,7. աշխատավարձի ֆոնդը՝

[4] «Սովետական Հայաստան», 25 նոյեմբերի 1945 թ.։

130,6, իսկ բանվոր-ծառայողների թիվը՝ 59,8 տոկոսով։ Չնայած դեռևս գոյություն ունեցող լուրջ թերություններին, որոշ հաջողություններ էին ձեռք բերվել հանրապետության սոցիալիստական գյուղատնտեսության բնագավառում։ Տեղի էր ունեցել ժողովրդական կրթության, գիտության և արվեստի հետագա զարգացում։ Հնգամյա պլանի հաջող կատարման և սովետական կառավարության կողմից կենսամթերքների ու լայն սպառման առարկաների գների մի շարք իջեցումների շնորհիվ զգալի չափով բարձրացել էր աշխատավորների կենսամակարդակը։

ՍՍՀՍ չորրորդ հնգամյա պլանի հաջող կատարումը ապահովեց սովետական երկրի հետագա տնտեսական-տեխնիկական հզորությունը, ստեղծեց անհրաժեշտ նախադրյալներ կոմունիստական շինարարության նոր, ավելի լայն մասշտաբների պլաններ մշակելու և նրանց իրագործումը ապահովելու համար։ Այդպիսի պլան հանդիսացավ ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման հինգերորդ հնգամյա պլանը (1951—1955 թթ.), որի վերաբերյալ դիրեկտիվներ ընդունեց ՍՄԿԿ XIX համագումարը։ Կուսակցության դիրեկտիվները ելնում էին նրանից, որպեսզի արդյունաբերական շինարարության տեղաբաշխումը ավելի բարելավվի. այն ավելի մոտեցվի հումքի և վառելիքի աղբյուրներին։ Այդ մասին դիրեկտիվներում ասված էր. «Ապահովել նոր հնգամյակում արդյունաբերական ձեռնարկությունների շինարարության աշխարհագրական տեղաբաշխման բարելավումը՝ նկատի ունենալով արդյունաբերության հետագա մոտեցումը հումքի և վառելիքի աղբյուրներին՝ ոչ ռացիոնալ և չափազանց հեռավոր փոխադրումները վերացնելու նպատակով»[6]։ Այդ նշանակում էր, որ արդյունաբերական նոր շինարարությունը ավելի մեծ չավով պետք է տեղի ունենար երկրի ծայրամասերում և ազգային հանրապետություններում, որոնք հարուստ էին հումքով և էներգետիկ բազայով։ Այդպիսի նախատեսումը բխում էր կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականությունից։ Այսպիսով, նոր հնգամյա պլանը միաժամանակ սովետական ազգային հանրապետությունների, այդ թվում և Սովետական Հայաստանի, հետագա բուռն զարգացման, նրանց էկոնոմիկայի և կուլտուրայի աննախընթաց վերելքի պլան էր։

Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության և ինտելիգենցիայի նվիրված աշխատանքի շնորհիվ հինգերորդ հնգամյա պլանը նույնպես հաջողությամբ կատարվեց։ Հետագա բուռն զարգացում ապրեց սոցիալիստական արդյունաբերությունը։ Հնգամյակի տարիներին կառուցվեցին և շահագործման հանձնվեցին ավելի քան 40 խոշոր արդյունաբերական ձեռնարկություն, այդ թվում Գյումուշի հիդրոէլեկտրակայանը, Ֆաջաբանի պղնձամոլիբդենային կոմբինատը, Երևանի էլեկտրալամպերի, մարդարինի, կոնյակի, Արարատի ազբոշիֆերի, Թումանյանի հրակայուն աղյուսի, Լենինականի երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարանները, Ախթալայի հարստացուցիչ ֆաբրիկան, յուղի-կաթի մի շարք գործարաններ հանրապետության տարբեր շրջաններում և այլն։ Այդ բոլորի շնորհիվ խոշոր չա-

5 Գ. Հարությունյան, Հաշվետու զեկուցում ՀԿ(բ)Պ XV համագումարին ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, Երևան, 1951, էջ 12—13։

6 Պարտիայի XIX համագումարի դիրեկտիվները ՍՍՌՄ զարգացման 1951—1955 թվականների հինգերորդ հնգամյա պլանի վերաբերյալ, Երևան, 1952, էջ 5։

փով ավելացավ սոցիալիստական արդյունաբերության արտադրանքը, 1950 թ. համեմատությամբ 1955 թ. աճելով մոտ 2 անգամ, իսկ 1940 թ. համեմատությամբ՝ 4,6 անգամ։ Հնգամյակի տարիներին վճռական կուրս վերցվեց արդյունաբերության միակողմանի զարգացումը վերացնելու համար և կգալի աշխատանք կատարվեց այդ ուղղությամբ։ Ավելի լայն չափով սկսեց զարգանալ ոչ էներգատար արդյունաբերությունը, առաջին հերթին՝ մեքենաշինությունը, գործիքաշինությունը և այլն։ Դրանով իսկ որոշ նախադրյալներ ստեղծվեցին ավելի խնայողաբար օգտագործելու Սևանի ջրային-էներգետիկ պաշարները։

Գյուղատնտեսության մեջ աշխատանքների լավ կազմակերպումը շարունակում էր մնալ հանրապետության կուսակցական կազմակերպությունների, բոլոր աշխատավորների, հատկապես գյուղատնտեսության աշխատողների ամենակարևորագույն խնդիրը։

Հինգերորդ հնգամյակի տարիներին Սովետական Հայաստանում տեղի ունեցավ ժողովրդական կրթության, գիտության, գրականության, արվեստի և կուլտուրայի այլ բնագավառների հետագա զարգացում։ Սովետական կառավարությունը հսկայական ներդրումներ կատարեց այդ գործում, որի ընդհանուր դումարը չորրորդ հնգամյակի 4.554,6 միլիոն ռուբլուց հինգերորդ հնգամյակում հասավ 5.031,8 միլիոն ռուբլու։

Հաջողությամբ ավարտելով հինգերորդ հնգամյա պլանի կատարումը, Սովետական Հայաստանի աշխատավորները, ամբողջ սովետական ժողովրդի հետ միասին, ձեռնամուխ եղան երկրի հետագա զարգացման նոր, ավելի մեծ մասշտաբների խնդիրների իրագործմանը։

ՍՄԿԿ XX համագումարում (1956 թ. փետրվար) հաստատված վեցերորդ հնգամյա պլանով նշված էին ինչպես բոլոր ազգային սովետական հանրապետությունների, նույնպես և Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության ու կուլտուրայի խնդիրները 1956—1960 թվականներին։

Այդ հնգամյակի առաջին երեք տարիներին՝ 1956—1958 թվականներին, Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերը ապահովվեցին իրենց առաջադրանքների կատարումը։ Արդյունաբերության ընդհանուր արտադրանքը եթե 1940 թվականի համեմատությամբ 1955 թվականին ավելացել էր 4,7 անգամ, ապա 1958 թվականին՝ 6,3 անգամ[7]։ Այդ տարիներին, հատկապես 1958 թվականին, կարևոր հաջողությունների հասավ գյուղատնտեսությունը, որի համար Հայկական ՍՍՀ-ն արժանացավ բարձր պարգևի՝ Լենինի շքանշանի։ Երախտագիտությամբ ընդունելով իրենց աշխատանքների այդպիսի բարձր գնահատականը, Հայաստանի աշխատավորները խորապես գիտակցում էին, որ իրենք դեռևս մեծ խնդիրներ ունեն հանրապետության ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի, հատկապես գյուղատնտեսության աշխատանքների հետագա բարելավման համար։ Ուստի, նրանք էլ ավելի մեծ եռանդով լծվեցին այդ խնդիրների կատարմանը։

Հաշվի առնելով վեցերորդ հնգամյակի առաջին երեք տարիների պետական պլանների հաջող կատարումը և հնգամյակի կանխագծումներից ավելի ու ավելի մեծ մասշտաբների շինարարության ծավալման իրական հնարավորությունները, կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությու-

[7] Советская Армения за 40 лет. Статистический сборник. Ереван, 1960. էջ 47։

նը մշակեցին ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման յոթնամյա պլանը (1959—1965 թթ.), որի թեզիսները հաստատվեցին ՍՄԿԿ XXI արտահերթ համագումարում (1959 թ.)։ Համագումարը նշեց, որ տնտեսական ու հասարակական կյանքի բոլոր բնագավառներում ձեռք բերած հսկայական փոփոխությունների, սովետական ժողովրդի պատմական հաղթանակների շնորհիվ Սովետական Միությունում սոցիալիզմը հաղթանակել է լիակատար և վերջնական, որ երկիրը թևակոխել է կոմունիզմի կառուցման ժամանակաշրջանը, որի գլխավոր խնդիրներն են կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծումը, մեր երկրի տնտեսական ու պաշտպանական հզորության հետագա ամրապնդումը և ժողովրդի նյութական ու հոգևոր աճող պահանջմունքների լրիվ բավարարումը։

ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման յոթնամյա պլանը իր վիթխարի նախատեսումներով և հաջող կատարումով կարևորագույն առաջընթաց քայլ հանդիսացավ այդ խնդիրների իրագործման ճանապարհին։

Յոթնամյա պլանով Սովետական Հայաստանի էկոնոմիկայի և կուլտուրայի զարգացման հիմնական ցուցանիշները արտահայտվում էին հետևյալ տվյալներով. 1958 թվականի համեմատությամբ արդյունաբերության ընդհանուր արտադրանքը 1965 թվականի վերջին աճելու էր 2,2 անգամ։ Այդ պետք է կատարվեր մի կողմից՝ գործող ձեռնարկությունների տեխնիկական կատարելագործմամբ, արտադրողականության բարձրացմամբ և մյուս կողմից՝ բազմաթիվ նոր ձեռնարկությունների կառուցմամբ։ Գյուղատնտեսության հետագա զարգացումը տեղի էր ունենալու առավելապես անասնաբուծության, խաղողագործության և պտղաբուծության ընդլայնման միջոցով։ Շարունակվելու էր գյուղատնտեսության արտադրության մեքենայացումը։ Լուրջ միջոցառումներ էին ձեռնարկվելու աշխատավորների նյութական բարեկեցության բարձրացման և կուլտուրական շինարարության բնագավառներում։ Կառուցվելու էր 3.930 հազար քառ. մետր բնակելի տարածություն և այլն։

Ստեղծագործական եռանդուն աշխատանք և պայքար ծավալելով յոթնամյա պլանի կենսագործման համար, Սովետական Հայաստանի բանվոր դասակարգը, կոլտնտեսային գյուղացիությունը և ինտելիգենցիան նոր հաջողությունների հասան։

Արդյունաբերության ընագավառում այդ հաջողություններն արտահայտվում են հետևյալ ցուցանիշներով։ Ինչպես նշեց Հայաստանի կոմունիստական կուսակցության XXIV համագումարը, այդ տարիներին ստեղծվեցին և արագ կերպով զարգացան արդյունաբերության մի շարք նոր ճյուղեր՝ սարքաշինությունը, էլեկտրոնիկան, ռադիոէլեկտրոնիկան, գործիքաշինությունը, դրվեց հաշվիչ մեքենաների արտադրության հիմքը, որը համարվում է ժամանակակից արդյունաբերության ամենաբարդ ճյուղերից մեկը։ Իրագործվեց արդյունաբերական հսկայական շինարարություն։ 1959—1965 թթ. ժողովրդական տնտեսության մեջ ներդրվեց 2 միլիարդ 24 միլիոն ռուբլի։ Այդ 1,5 անգամ ավելի էր, քան սովետական իշխանության նախորդ բոլոր տարիներին Հայաստանի ժողովրդական տնտեսությանը հատկացված բոլոր կապիտալ ներդրումները՝ միասին վերցրած։ Կառուցվեցին և շահագործման հանձնվեցին տասնյակ արդյունաբերական ձեռնարկություններ։ Լուսավանը, Աբովյանը, Ագարակը դարձան արդյունաբերական նոր կենտրոններ։ Մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ շահագործման հանձնվեցին Արզնիում, Դիլիջանում, Կա-

մոյում, Իջևանում, Գորիսում, Սպիտակում, Ապարանում, Շամշադինում և այլ շրջաններում ու քաղաքներում։ Նոր արդյունաբերության, հատկապես մեքենաշինության զարգացմանը կուղղեցիր հետագա զարգացումը ապրեց թեթև և սննդի արդյունաբերությունը։

Առանձնապես վերելք ապրեց ժողովրդական տնտեսության էներգետիկ բազան։ Ավարտվեցին և ամբողջ կարողությամբ շահագործման հանձնվեցին Սևանի կասկադի վերջին էլեկտրակայանները։ Կառուցվեցին Երևանի և Կիրովականի հզոր ջերմաէլեկտրակայանները, որոնք աշխատում են գազով։ Մեծ թափով շարունակվում էր Հրազդանի ջերմաէլեկտրակայանի շինարարությունը։ Ամբողջությամբ վերցրած՝ յոթնամյակի տարիներին գործարկվեցին 500 հազար կիլովատ էներգետիկ կարողություններ։ Սևանը պահպանելու նպատակով սկսվեց մոտ 50 կիլոմետր երկարություն ունեցող Արփա—Սևան ստորերկրյա ջրուղու կառուցումը, որն Արփայի ջուրը հասցնելու է Սևան և պահելու նրա մակարդակը։ Այդ շինարարությունը կատարվում է լեռնային ծանր պայմաններում, ծովի մակերևույթից 1.800—2.100 մետր բարձրության վրա։ Թունելաշինության համաշխարհային պրակտիկայում այդ աննախընթաց երևույթ է։ Նրա շինարարության հաջող ընթացքը վառ կերպով ցույց է տալիս Սովետական Հայաստանի ինժեներական կադրերի բարձր մակարդակը, հիդրոշինարարների հերոսական աշխատանքը, շինարարներ, որոնց շարքերում կան եղբայրական սովետական ժողովուրդների բազմաթիվ զավակներ՝ ռուսներ, ուկրաինացիներ, վրացիներ, ադրբեջանցիներ և այլն։

Յոթնամյակի տարիներին Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ, որպես վառելիքի նոր տեսակ, լայնորեն մուտք գործեց գազը, որը ստացվում է եղբայրական Սովետական Ադրբեջանից։ Բնական և հեղուկ գազը 1965 թվականին կազմեց հանրապետության ամբողջ վառելիքի 45 տոկոսը։

Լայնածավալ արդյունաբերական շինարարության, եղած ձեռնարկությունների հզորությունների ավելացման, նրանց աշխատանքի բարելավման և բանվոր դասակարգի նվիրական աշխատանքի շնորհիվ յոթնամյակում ապահովվեց արդյունաբերական առաջադրանքների հաջող կատարումը։ Արդյունաբերական արտադրանքի ծավալն աճեց 2,2 անգամ։

Ներկայումս Հայաստանը հանդիսանում է մետաղահատ հաստոցների, էլեկտրատեխնիկական սարքավորումների, էլեկտրոնային հաշվիչ մեքենաների, ճշգրիտ-չափիչ սարքերի, պղնձի և մոլիբդենի, ոսկու և ալյումինի, սինթետիկ կաուչուկի և ավտոդողերի, ժողովրդական սպառման բազմաթիվ առարկաների արտադրության առաջավոր հանրապետություն։ Նրա արդյունաբերության արտադրանքի շատ տեսակներ հայտնի են և լայնորեն սպառվում են ոչ միայն Սովետական Միության տարբեր մասերում, այլև արտասահմանյան շատ երկրներում։ 1966 թվականին Հայաստանի 122 արդյունաբերական ձեռնարկության արտադրանքի ավելի քան 130 տեսակ արտահանվել է Արևմտյան Եվրոպայի, Լատինական Ամերիկայի, Ասիայի և Աֆրիկայի 69 երկիր։ Արտահանվող ապրանքների թվումն են վանուզան տեսակի ժամանակակից հաստոցներ, ճշգրիտ սարքեր, տարբեր մեքենաներ, գորգեր, կոնյակ, գինի, պահածոներ և այլն։ Դա Սովետական Հայաստանի բարձր կուլտուրա ունեցող բանվոր դասակարգի, փորձված ինժեներների, կոնստրուկտորների, ար-

տաղրության լավագույն կազմակերպիչների նվիրական աշխատանքի կարևորագույն արդյունքներից մեկն է։

1966 թվականին Սովետական Հայաստանում կար ավելի քան 600 արդյունաբերական ձեռնարկություն։ Բնորոշ է, որ եթե նախասովետական Հայաստանում եղած հատ ու կենտ արդյունաբերական ձեռնարկությունները աշխատում էին հետամնաց, տնայնագործական սարքավորումներով, ապա Հայաստանի ներկա արդյունաբերությունը զինված է հայրենական ժամանակակից ամենաառաջավոր տեխնիկայով։ Ներկայումս Սովետական Հայաստանը 5 անգամ ավելի մետաղահատ հաստոցներ է արտադրում, քան ամբողջ ցարական Ռուսաստանը արտադրել է 1913 թվականին, իսկ էլեկտրաէներգիա արտադրում է 1,5 անգամ ավելի։

Սոցիալիստական արդյունաբերության հետ միասին մեծ չափով աճել է Սովետական Հայաստանի բանվոր դասակարգը թե՛ քանակապես և թե՛ որակապես։ Եթե 1928 թվականին Հայաստանի արդյունաբերության մեջ աշխատում էր 15.681 բանվոր-ծառայող[8], ապա 1965 թվականին այդ թիվը հասել էր 628 հազարի, մեկ տարվա ընթացքում ավելանալով 46,3 հազարով[9]։ Այդ թվից 350 հազարը արդյունաբերության մեջ, շինարարությունում և տրանսպորտում աշխատող բանվոր դասակարգն է, մեր հասարակության առաջատար ուժը։

Յոթնամյակի տարիներին որոշ հաջողություններ հասավ Սովետական Հայաստանի սոցիալիստական գյուղատնտեսությունը։ Այդ տարիներին պետությունը գյուղատնտեսության մեջ կատարեց 340 միլիոն ռուբլու կապիտալ ներդրում, որը 2 անգամ ավելի էր, քան նախորդ 7 տարում։ Զգալի չափով ընդարձակվեց գյուղատնտեսության տեխնիկական բազան։ Տրակտորային պարկն աճեց 213, բեռնատար ավտոմեքենաներինը՝ 175 տոկոսով, հանքային պարարտանյութերի օգտագործումն ավելացավ 2,4 անգամ։ Ավելի ընդարձակվեց ոռոգման ցանցը, ջրովի հողերի ընդհանուր տարածությունը հասավ 254 հազար հեկտարի։

Հանրապետության էկոնոմիկայի զարգացման զուգընթաց տեղի է ունեցել աշխատավորների նյութական կենսամակարդակի բարձրացում։ Յոթնամյակի տարիներին հանրապետության ազգային եկամուտը աճեց 76 տոկոսով։ Յուրաքանչյուր տարի ավելանում են բյուջետային ծախսումները հոգուտ աշխատավորների նյութական կենսամակարդակի բարձրացման։ Կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության հոգատարության շնորհիվ տեղի ունեցավ ուսուցիչների, բժիշկների, առևտրի, հասարակական սննդի և բնակչության կենցաղային սպասարկման աշխատողների աշխատավարձի բարձրացում։ Ավելի քան 160 հազար բանվոր-ծառայողի աշխատավարձը բարձրացավ 26,2 տոկոսով։ Իրագործվեց կոլտնտեսականների թոշակավորումը։ Միայն 1965 թվականին մոտ 50 հազար կոլտնտեսականի թոշակ նշանակվեց։ Ավելի ընդարձակվեց առողջապահության ցանցը և բարելավվեց աշխատավորության բժշկական սպասարկումը։ Ներկայումս Հայաստանում աշխատում է մոտ 6.000 բժիշկ։ Մեծ չափով աճել է Սովետական Հայաստանի

---

[8] Социалистическое строительство Армянской ССР. Статистический сборник, Ереван, 1940, էջ 12։

[9] «Սովետական Հայաստան», 6 փետրվարի 1966 թ.։

ազգաբնակչությունը։ 1920 թվականի 700 հազարից ներկայումս նրա թիվը հասել է ավելի քան 2 միլիոն 200 հազարի։

Յոթնամյակի տարիներին Սովետական Հայաստանում հետագա բուռն զարգացում ապրեցին հայ ժողովրդի ազգային կուլտուրան, արվեստը և գիտությունը։ 1965—1966 ուսումնական տարում բոլոր տիպի դպրոցների թիվը հասել էր 1.574-ի, որոնցում սովորում էր մոտ 530 հազար աշակերտ։ Հանրապետության 11 բարձրագույն ուսումնական հաստատություններում կար 39 հազար ուսանող, տեխնիկումներում և ուսումնարաններում՝ 31 հազար սովորող։ Կառուցվել և շահագործման են հանձնվել դպրոցական բազմաթիվ նոր շենքեր ինչպես քաղաքներում, նույնպես և ավաններում ու գյուղերում։

Ազգային կադրերից աճած գիտնականների մեծ բանակը, որի թիվը հասնում է մոտ 7.000-ի, կարևոր ներդրում է կատարել և կատարում է ֆիզիկայի, քիմիայի, տիեզերագիտության և տիեզերքի յուրացման, հաշվիչ մեքենաների ստեղծման, մեքենայական թարգմանության, գյուղատնտեսական, բժշկական, կենսաբանական և հասարակական գիտությունների զարգացման գործում։ Սովետական Հայաստանի գիտության, կուլտուրայի և արվեստի գործիչներից շատերն իրենց նշանավոր գործերով և գիտության մեջ մտցրած ավանդով հայտնի են ոչ միայն մեր հանրապետությունում, Սովետական Միության մեջ, այլև ամբողջ աշխարհում։

Հաջողությամբ ավարտելով յոթնամյա պլանի կատարումը, Սովետական Հայաստանի աշխատավորները, Սովետական Միության բոլոր աշխատավորների հետ միասին, ձեռնամուխ են եղել 1966—1970 թթ. նոր հնգամյա պլանի կատարմանը, նրա առաջին տարում հասնելով կարևոր հաջողությունների։ Այդ հնգամյա պլանը մեր հանրապետության սոցիալիստական էկոնոմիկայի հետագա բուռն զարգացման պլան է, կարևորագույն առաջընթաց քայլ կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման ճանապարհին։ Նախատեսված է հինգ տարում արդյունաբերության արտադրանքն ավելացնել 1,8, գյուղատնտեսությանը՝ 1,3 անգամ։ Հետագա զարգացում են ապրելու ժողովրդական կրթությունը, գիտությունը և արվեստը։

* * *

Սովետական Հայաստանի անցած 47 տարիների հերոսապատումնեջրով լի ուղին փայլուն կերպով ցույց է տալիս, որ պատմականորեն այդ կարճ ժամանակամիջոցում նա ենթարկվել է առաջընթաց վիթխարի փոփոխությունների։ Եթե նախասովետական Հայաստանը հանդիսանում էր հետամնաց, գաղութային մի երկիր, իսկ դաշնակցականների անփառունակ իշխանության ժամանակ դատապարտված էր կործանման, ապա ներկայումս իր բարձր զարգացած էկոնոմիկայով և կուլտուրայով առաջավոր սոցիալիստական հանրապետություն է, աշխարհի ամենահզոր սոցիալիստական բազմազգ պետության՝ Սովետական Միության իրավահավասար 15 հանրապետություններից մեկը։ Խոր անցյալի գիրկն է անցել նախկինում ոտնահարված և կործանման դատապարտված Հայաստանը։

Զարգացման այդ աստիճանին Հայաստանը հասել է սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում, նրանց բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության պայմաններում։ Նրան հակայական տնտե-

սական, քաղաքական, ռազմական և բարոյական օգնություն է ցույց տվել ռուս մեծ ժողովուրդը։ Ռուս ժողովրդի այդ օգնության մասին գեղեցիկ կերպով ասված է Հայկական ՍՍՀ Պետական հիմնի հետևյալ խոսքերում.

Մեծ Ռուսիան մեզ եղբայրության ձեռ՝ մեկնեց,
Մենք կերտեցինք ամրակուռ նոր պետություն,
Ոչ մի ոսոխ չի կարող ծնկի բերել
Անսասան ժողովրդին մեր հնազույն։

Սովետական Հայաստանը հանդիսանում է ոչ միայն այնտեղ ապրող հայության, այլև ամբողջ սփյուռքահայության հայրենիքը։ Սփյուռքահայության հոծ մասսաները լավ են գիտակցում, որ իրենց իսկական հայրենիքը Սովետական Հայաստանն է, որ առանց այնտեղ վերադառնալու, վաղ թե ուշ, սփյուռքահայությունը, որպես հայ ազգի մի ստվար մասը, դատապարտված է ձուլման։ Ահա թե ինչու այդ մասսաների համար հայրենադարձությունը կենսական նշանակություն է ստացել։

Չնայած բազմաթիվ լուրջ դժվարություններին, Հայաստանի սովետական կառավարությունը իր գոյության առաջին իսկ տարիներից մեծ ուշադրություն է դարձրել սփյուռքահայության հայրենադարձության հարցին։ Ընդառաջելով Հունաստանում, Մերձավոր Արևելքում և այլ երկրներում ապրող հայերի բուռն ցանկությանը, Սովետական Հայաստանի կառավարությունը դեռևս 1920-ական թվականներին, ֆինանսական-տնտեսական դժվարին պայմաններում, կազմակերպեց առաջին մասսայական հայրենադարձությունը, որի ընթացքում հայրենիք վերադարձան ավելի քան 25 հազար հայեր։ Հայրենադարձությունը շարունակվեց նաև 1930-ական թվականներին, իսկ ավելի մասսայական բնույթ ստացավ 1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազմից հետո, երբ Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Ֆրանսիայից, Մերձավոր Արևելքից և աշխարհի տարբեր մասերից Սովետական Հայաստան վերադարձան ավելի քան 110 հազար հայեր։ Գուրգուրանքով ընդունելով իր գիրկը, հայրենիքը նրանց ապահովեց բնակարաններով, աշխատանքով, կյանքի համար մյուս անհրաժեշտ պայմաններով։ Հայ ազգի համար այդ մեծ ու կարևորագույն միջոցառումը իրականացվեց, իհարկե, ոչ հեշտ ու հանգիստ, ոչ առանց դժվարությունների և առանց թերությունների։ Ժամանակի ընթացքում դրանք հաղթահարվեցին ու վերացվեցին։ Եվ հաշվի առնելով նախորդ տարիների փորձը, ներկայումս հայրենադարձության կազմակերպումը ավելի լավ հիմքերի վրա է դրված։

Վերադառնալով հայրենիք, միանալով իրենց մայր ժողովրդին, նրա հետ միասին, այդ բազմահազար հայ աշխատավորները ակտիվ կերպով մասնակցում են Սովետական Հայաստանի՝ իրենց սոցիալիստական հայրենիքի էկոնոմիկայի, ժողովրդական կրթության, արվեստի ու գիտության հետագա նոր հաջողությունների մեծ գործին։

Հայ ժողովրդի ազգային վերածննդի փառավոր ուղին ուսանելի շատ բան ունի ներկայումս հանուն իրենց ազատության, սոցիալական ու ազգային անկախության պայքարող աշխարհի ժողովուրդների համար։